ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2021 թվականի N 174-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, հիմք ընդունելով Հարություն Կաֆաֆյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Հարություն Եղիշի Կաֆաֆյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 8-րդ փողոցի 1-ին նրբանցքի 2-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0215-0013) ինքնակամ՝ 2021 թվականին կառուցած այգետնակը՝ 150,93 քառակուսի մետր արտաքին մակերեսով (այգետնակի ձեղնահարկը կառուցվել է 2006 թվականին) և պարիսպը՝ 5,6 քառակուսի մետր մակերեսներով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկներով.

1) բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) դրամ.

2) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 854 (ութ հարյուր հիսունչորս) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 219 410 (երկու հարյուր տասնինը հազար չորս հարյուր տասը) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Եղիշի Կաֆաֆյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական Դեկտեմբեր
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2021 թվականի N 175-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգի պահանջներով, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N 1 հավելվածի պահանջներով, հիմք ընդունելով Կարեն Լյուդվիգի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել փոփոխված Կարեն Լյուդվիգի Գրիգորյանին պատկանող (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0205-0075-ից) 0,0768 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական նշանակության այլ հողերից դարձնելով գյուղատնտեսական նշանակության վարելահող:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 176-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, հիմք ընդունելով Մերի Մայիլյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Մերի Գագիկի Մայիլյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 11-րդ փողոցի թիվ 22 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0219-0138) ինքնակամ՝ 2019 թվականին կառուցած այգետնակը՝ 202,37 քառակուսի մետր արտաքին մակերեսով (այգետնակի նկուղային հարկի մի հատվածը կառուցվել է 2021 թվականին), հարթակը՝ 33,3 քառակուսի մետր, բաց պատշգամբը՝ 42,78 քառակուսի մետր մակերեսներով, 2021 թվականին ինքնակամ կառուցած հարթակ-աստիճանավանդակը՝ 11,81 քառակուսի մետր, աստիճանավանդակը՝ 6,9 քառակուսի մետր, ծածկը՝ 69,18 քառակուսի մետր, հենապատը՝ 6,6 քառակուսի մետր և պարիսպը՝ 11,81 քառակուսի մետր մակերեսներով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկներով.

1) այգետնակի և դրա մաս հանդիսացող շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) դրամ.

2) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 854 (ութ հարյուր հիսունչորս) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 532 730 (հինգ հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր երեսուն) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մերի Գագիկի Մայիլյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի [illegible]
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2021 թվականի N 177-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 41-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը և հաշվի առնելով Տիգրան Մկրտչյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տիգրան Մկրտչյանին տալ համայնք Գետամեջ 4-րդ փողոց, 2-րդ փակուղի, N 195 հասցեում գտնվող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0153) բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի
գ.Գետամեջ